ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մարտի 13-ին կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17-36 պայմանագրում 2017 թվականի հուլիսի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետի երկարաձգում 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում՝ Պայմանագրի 9.4 և 9.6 կետեր:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
13.03.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17-36
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «19» հուլիսի 2017թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Շաբաբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 13.03.2017թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17-36 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.6 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող Գնման ժամանակացույցով նախատեսված մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և «III եռամսյակ մինչև 20.07.2017թ. ներառյալ» բառերը փոխարինել «III եռամսյակ մինչև 19.08.2017թ. ներառյալ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., 45 շ., 42 բն.
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01401171
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 205 222 207 495 1001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավար Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Շաբաբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.